ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հունիսի 7-ի N 01/27/5615-2019 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ***Հարություն Ալեքսանյանին*** 2019 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ՝ տասը օրով, ուղարկել քաղաք Երևան՝ *«Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում»* վերապատրաստման ծրագրով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. ***Հարություն Ալեքսանյանի*** վերապատրաստման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ ***Արմեն Հակոբյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 04
ք. Հրազդան
N 160-Ա